

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ, *Մկրտիչ Խրիմյան*, ՀՀ ԳԱ հրատ, Ե., 2000, 440 էջ:

Աշխատությունը նվիրված է նշանավոր հասարակական, կրոնական ու քաղաքական գործիչ Մ. Խրիմյանի գործունեությանը՝ ընդգրկելով 19-րդ դ. 2-րդ կեսի և 20-րդ դ. սկզբներն ընկած ժամանակաշրջանը, որ շատ կողմերով բախտորոշ եղավ մեր ժողովրդի համար: Ուսումնասիրությունն ունի մի յուրահատկություն՝ ժամանակը, պատմական դեպքերն ու դրանց զարգացման ընթացքը բեկվում են մեկ անձի գործունեության մեջ, գնահատվում վերջինի վերլուծությամբ ու բնութագրումներով:

Մինչև այս աշխատությունը, Մ. Խրիմյանի անձի և գործի ամբողջական նկարագիրը քացակայում էր մեր պատմագրության մեջ: Մասնավորապես, խորհրդային հեղինակներին ամենից առաջ կաշկանդել է Խրիմյանի՝ կրոնավոր լինելու հանգամանքը: Հեղինակը ց'օրս քաց մնացած այս գործը կատարել է պատասխանատվության խոր գիտակցությամբ, քառեխղճությամբ և նվիրումով, որ նրա հետազոտությունը տալիս է նաև քառոյական արժեք:

Աշխատությունն ունի աղբյուրագիտական և գրական հարուստ և ամուր հենք, հեղինակը օգտվել է հայրենական և օտար աղբյուրներից, արխիվային չհրապարակված ու հրապարակված քազմաթիվ նյութերից: Հազիվ թև լինի Խրիմյանին նվիրված փոքրիշատե ուշագրավ աշխատություն, նրա մասին կարծիք կամ տեսակետ, որ անծանոթ մնացած լինի հեղինակին: Ներածության մեջ իսկ ակնհայտ է դառնում այս ամենը, նաև՝ թեմայի ուսումնասիրության չափը, որ ուղեկցվում է քազմաթիվ հեղինակներին Է. Կոստանդյանի տված դիպուկ բնութագրումներով, տվյալ թեմայով նրանց ներդրումների քացահայտմամբ:

Աշխատության առաջին երեք գլուխներն ընդգրկում են Խրիմյանի գործունեության սկզբնավորման շրջանից մինչև 1869թ., երբ արդեն ի հայտ է գալիս իր ժողովրդին ու եկեղեցուն նվիրաբերված անհատը՝ աշխարհայացքային ու քառոյական իր որոշակի կողմնորոշումներով: Հեղինակն այս իրողությունները վերարտադրել է դրանց ներքին տրամաբանության համեմատ՝ ենթաթեմաների համոզիչ առանձնացումով, որպիսիք են Ժառանգավորուց վարժարանի և «Արծվի Վասպուրականի» հրատարակության սկիզբը, Արևելյան Հայաստանում Խրիմյանի ճամփորդությունը, Տարոնի ս. Կարապետ վանքում նրա նորամուծությունների նկարագիրը և այլն:

Խրիմյանը հանդես է եկել արևմտահայերի համար բեկումնային՝ սահմանադրական պայքարի և դրա հաստատման ժամանակաշրջանում: Անկախ այդ իրավական ակտի նշանակությունից կամ կիրառման շառավիղներից, սահմանադրության գաղափարը ինքնին սնուցանում էր մշակութային զարգացման, այլև ազգային ինքնորոշման տրամադրություններ: Հասարակական կյանքի հորձանուտում հայտնվեցին իրենց աշխարհայացքով և գործելակերպով նոր գործիչներ, գաղափարապես համախոհ և ներհակ անհատներ ու խմբեր, որոնք պետք է առաջ մղեին ազգային մտավոր ու մշակութային կյանքի զարգացումը: Աշխարհիկ երևելի մտավորականության՝ Գր. Օտյանի, Ն. Ռուսինյանի, Ն. Պալյանի, Աղաթոն եղբայրների,

Մերվիչենի, Հ. Մրվաճյանի և մյուսների կողքին հայտնվում են նաև եկեղեցու անձնվեր գործիչները՝ Մ. Խրիմյանը, Գ. Մրվանձտյանը, Ն. Վարժապետյանը և ուրիշներ: Հետևաբար, եկեղեցին ևս ապրում էր սահմանադրական դարաշրջանի նորացնող գործընթացը և Է. Կոստանդյանի այս աշխատության գիտական արժեքն ու նորույթը մի հայտնի չավտվ կայանում է նաև եկեղեցու դերի արժեքավորման մեջ, քանզի Խրիմյան երևույթը անխզելիորեն կապվում է հայ եկեղեցու դիմապատկերի, ազգային կյանքում ունեցած նշանակության հետ:

Ուշագրավ է «Արծվի Վասպուրականի» պարբերականի հմտալից վերլուծությունը, որ անմիջապես ամնչվում է հայ մամուլի պատմությանը և շատ ավելի հիմնավոր հետազոտության արդյունք է քանի որ դրա մասին մեր պատկերացումները սահմանափակվում էին բացառապես 1850-1860-ական թթ. ազատագրական գաղափարների շրջանակներում: Այստեղ էլ հեղինակը վերլուծում է Խրիմյանի հրապարակախոսությունը, նրա արժարժած՝ սահմանադրության, ազգային մարմինների, ժողովրդական ու հոգևոր դպրոցների և առհասարակ, Հայաստանի վերաշինության հարցերը: Այստեղ արժանի ուշադրություն է դարձված այդ հրապարակախոսական քննադատական ուղվածությանը: Գրքի ամենահետաքրքիր և դրույթներով հագեցած հատվածներից է չորրորդ գլուխը, որ բովանդակում է Խրիմյանի պատրիարքական գործունեության ժամանակաշրջանը (1869-1873): Այստեղ Խրիմյանի գործը գնահատվում է երկու շատ կարևոր հանգամանքների տեսակետից. նախ, *սահմանադրության վերաքննության խնդիրը*, որի հիմքում ընկած էր սահմանադրության *էական խմբագրման* գավառահայերի անտեսված իրավունքները ամրագրելու պահանջը: Այն Խրիմյանի և նրա կողմնակիցների համառ ջանքերի շնորհիվ իր գործնական արտահայտությունը ստացավ «Սահմանադրական հրահանգի» ձևով, որտեղ, ելնելով գավառի շահերից, նոր նորմեր էին սահմանվում գավառական ժողովների ընտրության, պարտականությունների և իրավունքների, կենտրոնի և գավառի վտխաբարբերությունների հարցում:

Խրիմյանի պատրիարքական գործունեության մյուս, ոչ պակաս կարևոր կողմը, որ դարձյալ պատշաճ և համոզիչ վերլուծության է արժանացել աշխատության մեջ, գավառական հարստահարությունների խնդիրն էր, այն Ազգային ժողովի օրակարգի մտցնելը և հանրահայտ «Տեղեկագիրը» Բ. դասը ներկայացնելը: Այս հենքի վրա Է. Կոստանդյանը կառուցում է այն ճշմարիտ եզրակացությունը, որ տեղեկագիրը հետագայում հիմք պետք է դառնար Հայկական հարցն արժարժելու համար: Իրոք, նաև այդ տեղեկագրի շնորհիվ էր, որ արևմտահայ մամուլը բաց արեց իր համար գրեթե մի անծանոթ աշխարհ՝ գավառի հայ կյանքի իրական պատկերը, լուսավորականության ընդհանուր շավղից ոտք դրեց սոցիալական մերկացումների ուղին՝ հաղթահարելով իր երբեմնի վերացականությունն ու կտրվածությունը Արևմտահայաստանի իրականությունից: Այս դրույթների վրա էլ հեղինակը կառուցում է իր շատ հիմնավորված եզրակացությունն այն մասին, որ «Խրիմյանի նկատմամբ արտահայտած կողմ և դեմ վերաբերմունքով սահմանազատվում էին դեմոկրատական ուժերը և կղերաամիրայական վերնախավը և նրանց շահերի արտահայտիչ մամուլի օրգանները»:

Խրիմյան մարդուն, մտածողին և ստեղծագործողին ըստ ամենայնի գնահատելու նպատակով հեղինակը վերլուծել է նաև նրա գեղարվեստական երկերը: «Ժամանակ և խորհուրդ յուր», «Դրախտի ընտանիք», «Հի-

սուսի վերջին շաբաթ կամ իսաչի ծառ» գործերում Է. Կոստանդյանը ի հայտ է բերում իր ժողովրդի բարոյականությանն ու պատվին նախանձախնդիր, կղերի և եկեղեցու թերությունները վերացնելուն հետամուտ գործչի նկարագիրը: Խրիմյանի այս և մյուս գործերի ամբողջական մտավոր ու մշակութային արժեքի գնահատումը ևս այս աշխատության բերած նշանակալի նորություններից է: Նշված գործերի, ապա դրանից հետո և «Վանգույժ» և «Հայգույժ» (1876-1877) ստեղծագործությունների նուրբ վերլուծությամբ հեղինակը նախապատրաստում և հիմնավորում է Խրիմյանի քաղաքական հայացքների վերջնական ձևավորման գործընթացը, օսմանյան բռնակալ կարգերին ընդդիմանալու նրա հավատամքը: Այս մեկնակետից էլ հեղինակը հանգամանալի քննության է ենթարկում Բեռլինի վեհաժողով մեկնած հայ պատվիրակության ղեկավար Խրիմյանի գործունեությունը, համադրում ոչ միայն պատվիրակության անդամների, այլև Նուպար փաշայի դիրքորոշումները, որ ի հայտ է բերում նրա լայն իրազեկությունը փաստերին և իրողություններին, մեծ տերությունների շահախնդրական վերաբերմունքին՝ միջազգային իրավունքի դատին խանձարուրի մեջ ներկայացող Հայկական հարցի նկատմամբ: Այս, բավականաչափ հանրածանոթ թեմայի վերլուծության մեջ ևս դրսևորվում է սեփական վերաբերմունք, երբ նշվում է, որ հիմնավոր չէ այն կարծիքը, թե Խրիմյանը կղերական գործիչ էր և ոչ դիվանագետ, ուստի և նրա առաքելությունը Բեռլինում դատապարտված էր ձախողման: Է. Կոստանդյանը իրավացիորեն ցույց է տալիս, որ անկախ պատվիրակության անդամների ինքնությունից, նրանք չէին կարող հաջողության հասնել, քանի որ այդ պահին տերությունների մեջ միանշանակ գործում էր շահերի հակամարտության իրողությանը, առկա էր նրանց խոր հակասությունների պարագան:

Խրիմյանի՝ 1880-ական գործունեությունը վերլուծելիս հեղինակը կատարել է իսկապես հարգանք հարուցող մանրագին աշխատանք՝ դարձյալ առաջին անգամ ըստ ամենայնի բացահայտելով Մ. Խրիմյանի կապերը «Սև խաչ» (Վան), «Պաշտպան հայրենյաց» (Կարին) և ազատագրական նպատակներ հետապնդող այլ գաղտնի կազմակերպությունների հետ: Նա համադրել է կցկտոր փաստերը, ակամատեսների ու այլ ժամանակակիցների վկայությունները՝ գիտականորեն երևակելով ազգային շարժման հանդիսալ Խրիմյանի վերաբերմունքը: Այս հիմքի վրա ևս բնութագրվում են Խրիմյանին սատարող մյուս առաջադեմ գործիչները՝ Գ. Սրվանձատյանը, Մ. Փոքրուզյանը, Կ. Կամսարականը և ուրիշներ:

Խրիմյանի գործունեության վերջին՝ կաթողիկոսական շրջանի վերլուծությունը հետևողականորեն ուղեկցվում է դրա որոշակի դրսևորումների հասարակական ու ազգային նշանակության գնահատանքով: Հետագոտական լուրջ արժեք են ներկայացնում շարադրանքի այն հատվածները, որոնք վերաբերում են Սասունի ապստամբությունից հետո ազատագրական շարժման գործիչների հետ Խրիմյանի կապերին, կոտորածներից փրկված արևմտահայ բեկորներին ապաստան տալու և այլ խնդիրներին: Համոզիչ փաստերով բացահայտվում են ցարական բյուրոկրատիայի հակահայկական ձեռնարկներին (հայկական դպրոցների փակում, հայ եկեղեցու գույքը հարքունիս գրավելու՝ 1903թ. հունվարի 12-ի օրենքը) կաթողիկոսի հաստատուն դիմակայությունը: Մեծ հայրենասերի գործունեության վերջին դրվագները եղան, ինչպես ցույց է տալիս հեղինակը, Հայկական հարցի միջազգային վերաբարձումներին ուղղված նրա ջանքերը:

Մեր կարծիքով, այս հիրավի, աշխատատար և հետազոտության քազմածալ ու վիճահարույց ուսումնասիրության օրյեկտը, ինքնին թելադրում է ոչ միանշանակ վերաբերմունք կամ ընկալումներ Խրիմյանի գործունեության, նրա ժամանակաշրջանի այս կամ այն կողմի վերաբերյալ: Թվում է պետք էր ավելի խորությամբ քացահայտել 1870-ականի սկզբներին «Նոր օսմանների» լիբերալ շարժման իրողությունը, որ մի հայտնի չափով հնարավորություն տվեց նորընտիր պատրիարք Խրիմյանին՝ առաջադրելու գավառական հարստահարությունների հարցը: Դրա անտեսումը սպասումում է Խրիմյանի գործունեության մի կարևոր հատվածը վերածելու զուտ ինքնարավ կամ անհատական իրողության:

Որպես ցանկություն, կնշեի մի հանգամանք. հեղինակը իրավացիորեն նկատում է, որ 1880-ականի վերջին արևմտահայ 50-ից ավելի թեմեր մնացել էին առանց առաջնորդների, որ անտերունչ էր գավառը: Բայց այս փաստը ունի իր քաղաքական ենթատեքստը, որ չպետք է անտեսել. Արդու Համիդը 90-ականի ջարդերից դեռ տարիներ ստաջ իրագործում էր որոշակի քաղաքականություն՝ անգլոլիս և անդեկ թողնելով հայ գավառը՝ թողնելով շատ վիճակներ սաանց առաջնորդների: Դա փաստորեն կոտորածների նախապատրաստում էր, հալածական քաղաքականություն հայերի հանդեպ, որին տազնապած ուշադրություն էր դարձնում ժամանակի հայ մամուլը (այսպես կոչված առաջնորդական խնդիրը):

Նշվածը ամենևին չի կարող վարագուրել այն խոշոր և լրջմիտ գործը, որ արել է Է. Կոստանդյանը՝ գիտական փայլուն վերլուծության ենթարկելով և արժևորելով մեր ոչ հեռու անցյալի հայրենամովեր դեմքերից մեկի՝ Մ. Խրիմյանի կյանքն ու գործունեությունը: Անվարան կարելի է ասել, որ գեղեցիկ և տպավորիչ հայերենով գրված այս գործը իր ծանրակշիռ ներդրումն է բերում անցյալի ազգային խոշոր դեմքերի գիտականորեն հրատապ վերաժեքավորմանը՝ մեր պատմագրության մեջ յուրովսանն հարթելով այս ազնիվ և արդյունավետ ուղղությունը:

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր